կերպ՝ Դավրիժեցին հիշատակում է նաև մի նամակ, որը Մելքիսեթ կաթողիկոսն է խնդրում Ամիրգունա խանին գրել Շահ-Աբասին. «ի խանէն ևս խնդրեաց Մելքիսէթ կաթուղիկոսն, գրել ***խնդրանաց թուղթ*** առ շահն» (էջ 200)։ Մեկ այլ նամակ էլ Ամիրգունա խանը այդ նամակին զուգահեռ գրում է իր որդուն՝ Թահմազղուլի խանին (էջ 202), բայց ուշարժանն այն է, որ դրա մասին Դավրիժեցին հիշատակելով՝ մեջբերում է ոչ թե անմիջապես, այլ հաջորդ՝ «Պատմութիւն կաթուղիկոսութեան և փախստեան Սահակ կաթուղիկոսին» վերնագրով ԺԹ գլխում, և դա արդարացվում է նրանով, որ եթե այդ երկրորդ նամակի պարզապես հիշատակությունն էր կարևոր նախորդ՝ «Յաղագս հարիւր թուման մուղադային, զոր շահն եդ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին» վերնագրով ԺԸ գլխում պատկերված իրադարձությունների համապատկերին, իսկ բուն բովանդակությունն այնքան էլ կարևոր չէր, ապա հաջորդ գլխում այդ նամակի բովանդակությունն է կարևորվում, քանզի լույս է սփռում իրադարձությունների հոսքի վրա։ Սա շատ նուրբ հնարանք է, որ առաջին հայացքից կարող է և չնկատվել։ Նշենք միայն, որ բերված է շատ փոքր մի հատված Ամիրգունա խանի՝ իր որդի Թահմազղուլի խանին ուղղված նամակից, բայց դա միանգամայն բավական է շարադրված դեպքերի ընթացքի տրամաբանությունն ըմբռնելու համար։

Դավրիժեցու պատմագրքում առկա են թղթային միավորներ, որոնք ոչ թե ուղղակիորեն են ներբերվում, այլ անուղղակիորեն պատմվում է դրանց բովանդակությունը։ Շատ նամակներ հիշատակվում են մեկ տողով, սակայն դա սովորաբար այնպիսի տող է, որ պարագրկում է նամակի ամբողջ բովանդակությունը։ Նույնն է պարագան նաև մի քանի տողով հիշատակվող նամակներում։ Այդպես, Դավրիժեցին մի քանի նախադասությամբ ներկայացրել է Մելքիսեթ կաթողիկոսի՝ Պողոս վարդապետին ուղղված բազմաթիվ նամակների, պատմիչի տարազմամբ՝ ***«բանս սպառնականս***